ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# Տարեկան հաշվետվություն

# 2006

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ....................................................................................3

Գյուտեր եւ օգտակար մոդելներ ..................................................4

Ապրանքային նշաններ եւ արդյունաբերական նմուշներ ............6

Ֆիրմային անվանումներ..............................................................10

Տեղեկատվական տեխնոլոգիաներ ............................................10

Լիցենզային եւ զիջման պայմանագրերի գրանցում ..................12

Իրավական դաշտ ........................................................................13

Միջազգային համագործակցություն ..........................................15

Հրատարակվում է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Արմինե ՓԵԹԱԿՉՅԱՆ
Գոհար ԱԴԱՄՅԱՆ

Դիզայն եւ էջատում Նաիրա ՁԵՅՐԱՆՅԱՆ

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

© *ՀՀ մտավոր սեփականության գործակալություն*

# ՆԱԽԱԲԱՆ

*Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը 2006թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված՝ գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաեւ պաշտոնական տեղեկությունների հրապարակման եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:*

*Ուշադրություն է դարձվել նաեւ բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, մասնավորապես իրավական դաշտի կատարելագործմանը. ընդունվել եւ ուժի մեջ են մտել «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքը, ինչպես նաեւ դրա հետ կապված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը:*

*Մշակվել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովում:*

*Մշակվել եւ ստեղծվել է գերատեսչության նոր ինտերնետային կայքը, որտեղ տեղադրվել են ազգային ընթացակարգով գրանցված եւ միջազգային ընթացակարգով իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանների եւ հանրահայտ ապրանքային նշանների հիմնապաշարները եւ որոնման համակարգերը: Ինտերնետային նոր կայքում տեղադրվել են գերատեսչության հրապարակած պաշտոնական տեղեկագրերը:*

# ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

*2006թ. << մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 193 գյուտի եւ 21 օգտակար մոդելի հայտ, որոնցից 213-ը՝ ազգային հայտատուներից, 1-ը՝ օտարերկրյա հայտատուից (աղյուսակ 1):*

*2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 2569:*

*Աղյուսակ 1*

| Երկիրը | 2005 | 2006 |
|---|---|---|
| Հայաստան | 226 | 213 |
| Այլ երկրներ | 5 | 1 |
| **Ընդամենը** | **231** | **214** |

*2005թ. համեմատությամբ 2006թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը նվազել է 17-ով կամ 7.4 %-ով, ընդ որում ազգային հայտատուներից ստացված հայ-*




*Նկ. 1*

տերի քանակը նվազել է 13-ով կամ 5.8 %-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 4-ով կամ 80%-ով:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆԵ) ներկայացվող միջազգային եւ Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ իրավաբանական անձանց, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2006թ. գործակալությունը ստացել է 7 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2006թ.թ. ժամանակաընթացքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 46 միջազգային հայտ:

2006թ. գործակալությունը ստացել է 2 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում այն առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն :

Այսպիսով, 1997-2006թ.թ. ժամանակաընթացքում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 11 եվրասիական հայտ:




A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, զենք եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

Նկ. 2

Հաշվետու ժամանակաշրջանում 179 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն եւ որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:

Գործավարությունն ավարտվել է 231 հայտով, ընդ որում՝

- 188 հայտով կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալու մասին,
- 2 հայտով կայացվել են որոշումներ հիմնական արտոնագիր տալու մասին,
- 23 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին,
- գյուտի 2 հայտով կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալը մերժելու մասին,
- գյուտի 11 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը հետ կանչելու մասին,
- օգտակար մոդելի 3 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը հետ կանչելու մասին,
- գյուտի 2 հայտով կայացվել են կրկնական փորձաքննության որոշումներ:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:

2006թ. տրվել է գյուտի 213 արտոնագիր եւ օգտակար մոդելի 27 արտոնագիր:

2006թ. ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 2-ում՝ գրաֆիկի տեսքով:

## ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2006թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1439 հայտ (որոնցից 945-ը՝ ազգային հայտատուներից) եւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 3 հայտ:

Ապրանքային նշանների 1410 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 55 հայտեր, իսկ 79 հայտով կայացվել են ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ: Գրանցվել են 1100 ապրանքային եւ սպասարկման նշաններ (որոնցից 739-ը՝ ազգային հայտատուների անունով), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:

Ապրանքի ծագման տեղանվան 3 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, եւ կայացվել է տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 1 որոշում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի եւ դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2600 ծանուցում: Նախնական մերժման մասին կայացվել է

450 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 89:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 6 հայտ:

2005թ. համեմատությամբ 2006թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ 1089-ի դիմաց (2005թ.) 945 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն աճել է ազգային ընթացակարգով (360- ի (2005թ.) դիմաց 404 հայտ):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 29 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 14-ը՝ ազգային հայտատուներից, 1-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, 1-ը՝ Իտալիայից, 1-ը՝ Լիխտենշտայնից, 4-ը՝ Կորեայի Հանրապետությունից, 1-ը՝ Վրաստանից, 2-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 2-ը՝ Ուկրաինայից, 3-ը՝ Ճապոնիայից): Դրանցից 11-ը ստացել են արտոնագիր, 6-ի համար կայացվել է որոշում արտոնագիր տալու մասին:

2005թ. համեմատությամբ ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է՝ ազգայինը՝ 10-ի դիմաց (2005թ.) 14 հայտ եւ օտարերկրյա հայտատուներինը՝ 10–ի դիմաց (2005թ.) 15 հայտ:

2006թ. տրվել է արդյունաբերական նմուշի 17 արտոնագիր:




Նկ. 3

*Աղյուսակ 2*

| Երկիրը | Ըստ ազգային ընթացակարգի | Մադրիդյան համաձայնագրի եւ դրանկիցարձանագրության շրջանակներում | Ընդամենը |
|---|---|---|---|
| Հայաստան | 945 | - | 945 |
| ԱՄՆ | 187 | 150 | 337 |
| Ավստրալիա | 2 | 9 | 11 |
| Ավստրիա | 1 | 35 | 36 |
| Արաբական Միացյալ Ամիրայություններ | 5 | - | 5 |
| Բելառուս | - | 6 | 6 |
| Բենիլյուքս | - | 135 | 135 |
| Բուլղարիա | - | 50 | 50 |
| Գերմանիա | 14 | 240 | 254 |
| Դանիա | 1 | 10 | 11 |
| Եգիպտոս | - | 15 | 15 |
| Էստոնիա | - | 6 | 6 |
| Թուրքիա | - | 95 | 95 |
| Իռլանդիա | 4 | 6 | 10 |
| Իսլանդիա | - | 5 | 5 |
| Իսպանիա | 2 | 45 | 47 |
| Իտալիա | 5 | 156 | 161 |
| Իրան | 7 | 14 | 21 |
| Լատվիա | - | 24 | 24 |
| Լեհաստան | - | 42 | 42 |
| Լիխտենշտայն | - | 35 | 35 |
| Լյուքսեմբուրգ | 9 | - | 9 |
| Կիպրոս | 12 | - | 12 |
| Կորեայի Հանրապետություն | 10 | 15 | 25 |
| Կուբա | - | 4 | 4 |
| Հնդկաստան | 3 | - | 3 |
| Հորվաթիա | - | 18 | 18 |
| Հունաստան | 3 | 5 | 8 |

| | | | |
|---|---|---|---|
| Հունգարիա | 2 | 55 | 57 |
| Ղազախստան | - | 8 | 8 |
| Ճապոնիա | 24 | 42 | 66 |
| Միացյալ Թագավորություն | 16 | 95 | 111 |
| Ներքին շուկայի ներդաշնակման գերատեսչություն (ապրանքային նշաններ եւ արդյունաբերական նմուշներ) | - | 85 | 85 |
| Նիդեռլանդներ | 11 | - | 11 |
| Նորվեգիա | 1 | 5 | 6 |
| Շվեդիա | - | 10 | 10 |
| Շվեյցարիա | 37 | 190 | 227 |
| Չեխիա | - | 36 | 36 |
| Չինաստան | 12 | 140 | 152 |
| Պորտուգալիա | - | 8 | 8 |
| Ռումինիա | - | 10 | 10 |
| Ռուսաստանի Դաշնություն | 17 | 206 | 223 |
| Սերբիա եւ Մոնտենեգրո | - | 22 | 22 |
| Սերբիայի Հանրապետություն | - | 10 | 10 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն | 2 | - | 2 |
| Սլովակիա | - | 35 | 35 |
| Սլովենիա | - | 34 | 34 |
| Վիրջինյան կղզիներ | 19 | - | 19 |
| Վրաստան | 11 | 8 | 19 |
| Ուկրաինա | 42 | 55 | 97 |
| Քենիա | - | 6 | 6 |
| Ֆինլանդիա | 4 | 24 | 28 |
| Ֆրանսիա | 5 | 145 | 150 |
| Այլ երկրներ | 26 | 251 | 277 |
| **Ընդամենը** | **1439** | **2600** | **4039** |

## ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2006 թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3694 հայտ:

Գրանցվել է ընդամենը 3525 անվանում, մերժվել է 169-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի 289 որոշման, ֆիրմային անվանման մեջ "հայ", "Հայաստան", "հայկական" բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 14 թույլտվություն, որը 2005թ. համեմատությամբ 5-ով պակաս է:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2006թ. լազերային սկավառակներով հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ № 1(37), № 2 (38), №3 (39) եւ № 4 (40): Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով՝ հայերեն եւ ռուսերեն, որոնց մեջ ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 213 գյուտի, 27 օգտակար մոդելի, 17 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1480 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների եւ 2349 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, 2004 թ. գրանցված ֆիրմային անվանումների հայտերի, ինչպես նաեւ արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման մասին (144 գրանցում):

Իրականացվել է 213 գյուտի եւ 27 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների եւ հավակնության սահմանումների էլեկտրոնային ձեւերի, ինչպես նաեւ 17 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը եւ հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաեւ «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Նախապատրաստվել եւ հրապարակվել է 2004-2005թ.թ. «Տարեկան հաշվետվությունը» հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով, պատրաստվել են դրանց էլեկտրոնային ձեւերը եվ տեղադրվել ինտերնետային էջում: Տարեկան հաշվետվություններն ուղարկվել են 26 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ:

Հրատարակվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար, որոնք նույնպես տեղադրվել են գոր-

ծակալության ինտերնետային էջում՝ համընդհանուր ծանոթացման նպատակով:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն ներկայացնելու համար պատրաստվել են 2005 թ. տեխնիկական եւ վիճակագրական հաշվետվությունները գյուտերի եւ օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների վերաբերյալ:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ եւ Հայաստանի ազգային գրադարան եւ ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվել են նաեւ Հայաստանի մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերն ուղարկել է 21 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաեւ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն, Եվրոպական արտոնագրային գերատեսչություն եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնց 4 համարներում զետեղված են մատենագիտական տվյալներ Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 213 գյուտի եւ 27 օգտակար մոդելի մասին հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով:

«CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում Եվրոպական արտոնագրային գերատեսչությունից, ինչպես նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Ֆրանսիայի եւ Կանադայի արտոնագրային գերատեսչություններից:

2006թ. շարունակվել է Եվրասիական արտոնագրային գերատեսչության հետ համատեղ գործակալության ստեղծած տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարի համալրումը:

Շարունակվել է ESPACE World գյուտերի որոնման համակարգերի ստացումը ՄՍՀԿ-ից, BREF եւ COSMOS գյուտերի որոնման համակարգերի ստացումը՝ Ֆրանսիայից :

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը վերազինվել է Pentium 4 տեսակի համակարգիչներով, համակարգչային օժանդակ սարքերով եւ սարքավորումներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները եւ բացթողումները: Զարգացման արդյունքում առաջացած խնդիրների ներդրման նպատակով կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ ՀՀ մտավոր սեփականության տեղեկատվական համակարգում: Արդյունքում ստեղծվել են նոր ենթավարկածներ, որոնք են՝ «Ապրանքային նշանների հիմ-

նապաշարի» երրորդ ենթավարկածը, «Գյուտերի եւ օգտակար մոդելների հիմնապաշարի» երկրորդ ենթավարկածը, «Ֆիրմային անվանումների հիմնապաշարի» երկրորդ ենթավարկածը, «Ապրանքների ծագման տեղանունների հիմնապաշարի» ենթավարկածը եւ «Արդյունաբերական նմուշների հիմնապաշարի» ենթավարկածը:

Իրականացվել են Windows XP համակարգերի եւ Microsoft office-ի տեղադրման եւ կարգաբերման, օպերացիոն համակարգի սպասարկման, համակարգչային ծրագրերի տեղադրման եւ կարգաբերման, վնասված համակարգիչների եւ ծրագրերի ախտորոշման եւ անսարքությունների վերացման, գյուտերի, օգտակար մոդելների, ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների հիմնապաշարների տեղադրման աշխատանքները:

Իրականացվել է Symantec Backup Exec 10d ծրագրի տեղադրում և կարգաբերում, տվյալների արխիվացման ռազմավարության մշակում, Symantec Anti-Virus Corporate Edition 10.1 ծրագրի տեղադրում և կարգաբերում:

## ԼԻՑԵՆԶԱՑԻՆ ԵՎ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2006թ. ընթացքում քննարկվել եւ գրանցվել են 134 պայմանագրեր, որոնցից 104-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 21-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 7-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 2-ը՝ արտոնագրային հասարակ լիցենզիա տալու մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2006թ. շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես ընդունվել եւ ուժի մեջ են մտել «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքը, ինչպես նաեւ դրա հետ կապված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Մշակվել եւ սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է:

Առաջարկություններ են ներկայացվել ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարին՝ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ծեւակերպման, ներկայացման եւ քննարկման» կարգում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ, որոնք հաստատվել եւ սահմանված կարգով գրանցվել են:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ոլորտում մտավոր սեփականության գործակալությունը հիմնականում համագործակցում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ), ինչպես նաեւ ԱՊՀ եւ այլ երկրների նմանատիպ կազմակերպությունների հետ:

Միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցում են ՄՍՀԿ, ԵԱԳ եւ ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին եւ որակավորման բարձրացման դասընթացներին:

Գործակալության մեկ մասնագետ մասնակցել է ՄՍՀԿ հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մշտական հանձնաժողովի նիստին, որտեղ քննարկվում էր ՄՍՀԿ հեռարձակող կազմակերպությունների իրավունքների մասին պայմանագրի նախագծի վերջնական տարբերակը:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության երեք մասնագետներ երեք շաբաթով մասնակցել են Ռուսաստանի

*Դաշնության արդյունաբերական սեփականության ինստիտուտի կազմակերպած ուսուցողական ծրագրերին:*

*2006թ. գործակալության տաս մասնագետներ մասնակցել են Ժնեւում, Մյունխենում, Բուդապեշտում, Մինսկում, Տաշքենտում եւ այլ քաղաքներում կազմակերպված ուսուցողական ծրագրերին, սեմինարներին եւ այլ պաշտոնական հանդիպումների: Երկու մասնագետներ մասնակցել են Ժնեւում անցկացվող ՄՍՀԿ ամառային դպրոցի դասընթացներին, որը ֆինանսավորել է USAID միջազգային զարգացման գործակալությունը:*

*2006թ. մարտի 13-31-ը գործակալության պետը մասնակցել է Սինգապուրում կայացած Ապրանքային նշանների իրավունքների մասին վերանայված պայմանագրի ընդունմանը նվիրված դիվանագիտական համաժողովին:*

*«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում նոր դրույթներ ներդնելու հարցերով խորհրդատվական առաքելությամբ գործակալություն է ժամանել ՄՍՀԿ արտոնագրային իրավունքի միջազգային փորձագետ Բոյան Պրետնարը:*